Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԺԲ.00.04- Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, վարչական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Գայանե Կարենի Մելիքյանի՝ «Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հանձնման ինստիտուտը, լինելով միջազգային փոխօգնության կառուցակարգ, էապես կարևոր դերակատարություն ունի հանցավորության դեմ պայքարի ոլորտում պետությունների համագործակցության հարցում: Անկախացումից ի վեր ՀՀ-ն հաստատել և շարունակում է հաստատել դիվանագիտական հարաբերություններ բազմաթիվ պետությունների հետ, միացել և միանում է երկկողմ և բազմակողմ միջազգային իրավական փաստաթղթերին՝ ստանձնելով մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցելու:

Չնայած ահագնացող տեմպով ընդլայնվող և զարգացող միջպետական հարաբերություններին՝ քննարկվող թեման ներպետական գիտական հարթակում գրեթե (իսկ վարութային ասպեկտով՝ ընդհանրապես) հետազոտված չէ, իսկ դրա ներպետական իրավական կարգավորումները խիստ թերի են, հակասական և խնդրահարույց:

ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում էապես կարևորվում է միջազգային իրավական փոխօգնության, այդ թվում՝ հանձնման հետ կապված իրավահարաբերությունների ներպետական կոդիֆիկացիան և դրա որակը: Մինչդեռ հանձնման ինստիտուտի խորը գիտական ուսումնասիրության բացակայությունն ինքնին չէր կարող իր արտացոլումը չգտնել այս ինստիտուտի օրենսդրական կարգավորման որակի վրա, ինչն էլ վտանգում է ինչպես միջպետական

հարաբերությունների կայունությունը, այնպես էլ մարդու իրավունքների երաշխավորման տեսանկյունից լուրջ խնդիրներ է առաջացնում:

Քննարկվող ինստիտուտի վերաբերյալ առաջին իրավական կարգավորումները նախատեսվել են 1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2005 թվականին կատարված փոփոխություններով: Մինչդեռ 2021 թվականին ընդունված նոր քրեական դատավարության օրենսգրքում հանձնմանը վերաբերող կարգավորումները տեղ չեն գտել, փոխարենը՝ քրեական գործերով իրավական օգնությանը վերաբերող հարցերը պետք է կարգավորվեն առանձին օրենքով, որը պետք է ընդունվեր և ուժի մեջ մտներ նոր օրենսգրքի հետ միաժամանակ: Սակայն նշված ոլորտը կարգավորող օրենքի նախագիծը դեռևս գտնվում է մշակման փուլում, իսկ հանձնման գործընթացը շարունակվում է իրականացվել նախկին օրենսգրքի՝ դեռևս ուժը պահպանած համապատասխան գլուխներով: Այս տեսանկյունից առաջ են եկել բազմաթիվ խնդիրներ՝ պայմանավորված այն պարզ իրողությամբ, որ նախկին օրենսգրքի քննարկվող գլուխներով նախատեսված չեն համապարփակ ընթացակարգային կարգավորումներ: Այս բացերը նախկին օրենսգրքի գործողության պայմաններում որոշ չափով հաղթահարվում էին համանման ինստիտուտները կարգավորող նորմերն անալոգիայով կիրառելով, մինչդեռ ձևավորված իրավիճակում դրանք այլևս իրավական ուժ չունեն, ուստի չեն կարող համանմանությամբ կիրառվել:

Ստեղծված իրավիճակն առավել քան արդիական և հրատապ է դարձնում հեղինակի կողմից ընտրված թեմայի համապարփակ հետազոտությունը և համապատասխան փաստարկված գործնական և օրենսդրական առաջարկների մշակումը: Վերջինը հատկապես կարևորվում է պայմանավորած այն հանգամանքով, որ ոլորտի կարգավորմանն ուղղված՝ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագծի ուսումնասիրությունից երևում է, դրանում ևս առկա են առերևույթ վիճահարույց կարգավորումներ, որոնք լրամշակման կարիք ունեն:

Հեղինակը իրավամբ առաջնահերթ ուսումնասիրության է ենթարկել քննարկվող ինստիտուտի բնույթը և տեղը իրավական համակարգում՝ առաջարկելով այն դիտարկել որպես քրեակադատավարական ինստիտուտ:

Բազմակողմանի ուսումնասիրության կատարման արդյունքում հեղինակը փորձել է հստակեցնել «հանձնում» հասկացությունը և այն տարանջատել «էքստրադիցիա» և «փոխանցում» հասկացություններից, ինչպես նաև դրան մոտ, սակայն իրավական

կարգավորումներով և նպատակներով դրանից տարբերվող միջազգային փոխօգնության այլ հարակից ինստիտուտներից:

Աշխատանքի արժեքներից է նաև այն, որ դրանում մանրամասն ուսումնասիրվել են միջազգային իրավունքի և արտասահմանյան երկրների օրենսդրությամբ նախատեսված կարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հարուստ նախադեպային իրավունքը, միջազգային այլ կառույցների պրակտիկան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև Ձերբակալման եվրոպական որոշման կարգավորումների ուսումնասիրմանը և քննարկվել դրա տրամաբանության կիրառելիությունը ՀՀ-ի դեպքում:

Հեղինակը փորձել է առանձնացնել միջազգային լավագույն փորձը, վեր հանել քննարկվող ինստիտուին վերաբերելի միջազգային և ներպատական չափորոշիչները՝ դրանց հաշվառմամբ էլ առանձնացրել և ներկայացրել է ինստիտուտի հիմնական սկզբունքները, խնդիրները, վեր հանել տարիների ընթացքում ձևավորված ներպետական իրավակիրառ պրակտիկայում առաջացած մի շարք խնդիրներ՝ առաջարկելով դրանց լուծման, այդ թվում՝ ներպետական օրենսդրությունը լրամշակելու ուղղություններ: Աշխատանքում վերլուծության են ենթարկվել նաև «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագծի առանձին կարգավորումներ, վեր հանվել դրանց կիրառելիության հետ կապված հիպոթեթիկ խնդիրները և առաջարկվել դրանք հաղթահարելու ուղիներ:

Աշխատանքն արժեվորվում է նրանով, որ հեղինակի կողմից կատարվել են տեսական եզրահանգումներ, ներկայացվել են տեսական հասկացություններ, իսկ գործնական առաջարկները արտացոլվել են համապատասխան օրենքներում փոփոխություն կատարելու առաջարկներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ինը պարագրաֆից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտության տեսական հիմքը կազմել են հանձնման ինստիտուտի և առհասարակ պետությունների միջազգային փոխօգնությանը նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրները:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ քրեական դատավարության շրջանակներում առաջին անգամ համապարփակ աշխատանքի շրջանակներում համակարգային և բազմակողմանի ուսումնասիրության են ենթարկվել

հանձնման գործընթացի առանձնահատկությունները, դրա իրավական հետևանքները: Աշխատանքի նորույթն արտահայտվում է նաև նրանում, որ առաջին անգամ հետազոտվել են «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ հանձնմանը և քրեական վարույթների փոխանցմանը վերաբերող կարգավորումները, մատնանշվել են դրանցում առկա թերությունները, որոնք հեղինակի կարծիքով գործնականում կարող են առաջացնել դժվարություններ, ինչպես նաև առաջարկվել են առավել արդյունավետ լուծումներ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական իմացության և այլ գիտական մեթոդներ, որոնց կիրառումը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազորությունն արդի պայմաններում կարող է կարևոր նշանակություն ունենալ հայկական իրավական համակարգում հանձնման ինստիտուտի կիրառման և զարգացման գործում, դրա արդյունքները կարող են օգտագործվել գործող կարգավորումներում համապատասխան փոփոխություններ կատարելիս, ինչպես նաև «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման ընթացքում: Հատկապես գնահատման արժանի է հեղինակի կողմից իրավակիրառ պարկտիկայի բազմակողմանի և խորը ուսումնասիրությունը, դրանում առկա առանձին վիճահարույց հարցերի վերլուծությունը և դրանց կապակցությամբ ուրույն առաջարկների ներկայացումը:

Աշխատանքի տեսական նշանակությունն ընդգծվում է հանձնման ինստիտուտի ընթացակարգային ասպեկտի բազմակողմանի ուսումնասիրության և դրա արդյունքը մեկ աշխատանքի շրջանակներում առաջին անգամ ամփոփելու լույսի ներքո: Այն կարող է հիմք հանդիսանալ ոլորտում ապագայում կատարվելիք այլ հետազոտությունների համար, ինչպես նաև օգտակար լինել համապատասխան նեղ մասնագետների վերապատրաստման համար:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական փաստաթղթերից, դատական նախադեպերից, միջազգային

ատյանների պրակտիկայից, ինչը հարստացրել է ատենախոսության բովանդակությունը և նպաստել եզրահանգումների հիմնավորվածությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ, հարկ է նշել, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև հեղինակի որոշ ինքնատիպ դատողություններով:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված գիտական հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրված ատենախոսությունը, ինչպես ցանկացած գիտական աշխատանք, զուրկ չէ վիճելի դրույթներից և առանձին թերություններից: Մասնավորապես.

1. Աշխատանքի առաջին գլխի 1-ին պարագրաֆում հեղինակը ներկայացրել և վերլուծության է ենթարկել հանձնման ինստիտուտի իրավական բնույթը և տեղը իրավական համակարգում: Արդյունքում՝ հեղինակը գտել է, որ հանձնումը իրավունքի այլ ճյուղերի հետ սերտ կապի մեջ գտնվելով հանդերձ, պետք է դիտարկել որպես դատավարական ինստիտուտ: Միակարծիք լինելով հեղինակի այն դատողության հետ, որ քննարկվող ինստիտուտը սերտ կապի մեջ է գտնվում իրավունքի մի շարք ճյուղերի հետ, այնուամենայնիվ դրա՝ քրեադատավարական ինստիտուտ լինելու հարցը խիստ վիճելի է մնում:

Վերջին դիրքորոշման համար հիմք է ծառայում նաև այն, որ աշխատանքի հետագա շարադրանքում հեղինակն ընդգծում է քննարկվող իրավահարաբերություններում կայացվող որոշումների քաղաքական բնույթը, շեշտադրում դրանց՝ միջպետական հարաբերություններից ուղղակի բխելու հանգամանքը, ինչպես նաև քննարկում այդ իրավահարաբերություններում որպես սուբյեկտ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավազորությունը, առաջարկում այն ընդլայնել: Միևնույն ժամանակ հեղինակն առաջարկում է քննարկվող ինստիտուտի առանձին հարցեր կարգավորելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձին իրավակարգավորումներում (այդ թվում՝ ձերբակալման, փորձաքննություն նշանակելու) կատարել համապատասխան փոփոխություններ:

Այս պայմաններում կարծում ենք, որ աշխատանքի որակը և հեղինակի եզրահանգումը հիմնավորվածության տեսանկյունից էապես կշահեին, եթե հեղինակը

քննարկվող հարցը դիտարկեր նաև քրեական դատավարության բնույթի, դրա նպատակների և խնդիրների պրիզմայից, ինչը հանարավորություն կընձեռեր գնահատել քրեադատավարական իրավահարաբերությունների և հանձնման ընթացակարգային հարաբերությունների նույնասեռության հարցը: Վերջինս մանրազնին հիմնավորման անհրաժեշտություն է ենթադրում՝ նկատի ունենալով, որ քրեաիրավական հիմք ունեցող ոչ բոլոր ընթացակարգերն են կարգավորվում քրեական դատավարության օրենսգրքով և ունեն քրեադատավարական բնույթ (օրինակ՝ հետախուզումը, օպերատիվ-հետախուզական գործունեությունը, քրեակատարողական վարույթը և այլն):

2. Աշխատանքի առաջին գլխի 3-րդ պարագրաֆում հեղինակը, մեկնաբանելով «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը, առաջարկում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երբ իրավասու մարմինը կանգնում է մեղադրանքի փոփոխության խնդրի առաջ, հայցող պետության իրավասու մարմնից համաձայնության ձեռք բերումը դիտարկել պարտադիր պայման, ինչ հնարավորություն կընձեռի զերծ մնալ այն իրավիճակներից, երբ մեղադրանքի փոփոխության արդյունքում, մեղադրանքից դուրս են գալիս դրվագներ, փոփոխվում փաստական հանգամանքներ, որոնք էապես կարող են ազդել հայցվող պետության կայացվելիք որոշման վրա:

Կիսելով ի հիմնավորում վերոնշյալ եզրահանգման աշխատանքում տեղ գտած մտահոգությունները՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ քննարկվող հոդվածը կարգավորում է ոչ միայն մեղադրանք առաջադրելիս, այլ նաև դատավճիռ կայացնելիս մեղադրանքի փոփոխության իրավիճակները: Այս տեսանկյունից, եթե մինչև վերդիկտ կայացնելը իրավասու մարմինների կողմից մեղադրանքի փոփոխության իրավիճակներում հայցող պետության համաձայնության ձեռքբերումը իրավական տեսանկյունից ողջամիտ է և իրատեսական, ապա դատարանի կողմից վերդիկտ կայացնելիս արարքի վերաորակման և/կամ առանձին փաստական հանգամանքներ ապացուցված չգնահատելու դեպքում անհասկանալի է այս կառուցակարգի գործադրման հնարավորությունը, ինչպես նաև այն հարցը՝ արդյոք քննարկվող կոնվենցիոն նորմը լրիվ կամ մասնակի սահմանափակում է դատարանի հիշյալ լիազորությունները, եթե այո՝ ապա ինչպիսի վերդիկտ կարող է կայացվել քննարկվող դեպքում:

Կարծում ենք հեղինակի քննարկվող առաջարկն այս տեսանկյունից լրացուցիչ հիմնավորումների և լրամշակման անհրաժեշտություն ունի:

3. Հեղինակի կողմից որպես պաշտպանության համար ներկայացվող դրույթ առաջարկվում է 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսել կարգավորում, որով քրեական վարույթ նախաձեռնելու պայման կդիտարկվի համապատասխան օտարերկյա պետության իրավասու մարմնի՝ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու մասին խնդրանքը: Մանավորապես հեղինակը նշել է, որ քննարկվող նորմի համաձայն՝ միջազգային իրավունքին համապատասխան՝ որևէ անձի հանձնման խնդրանքի մերժումը այդ հանձնման խնդրանքում նշված ենթադրյալ հանցանքի կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնելու առիթ է, եթե այդ անձի և նրան վերագրվող ենթադրյալ արարքի վրա տարածվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի գործողությունը: Հեղինակի համոզմամբ նշված կարգավորումը լիարժեք չէ այն հիմնավորմամբ, որ հաշվի չի առնում հայցող պետության՝ համապատասխան հետախուզվող անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու իր իրավազորությունը (յուրիսդիկցիան) զիջելու կամահայտնությունը:

Այս տեսանկյունից աշխատանքն ավելի կշահեր, եթե հիշյալ հարցը քննարկման առարկա դարձվեր նաև ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում: Մասնավորապես՝ նշված հոդվածը նախատեսում է այն անձանց շրջանակը և այն դեպքերը, որոնք նկատմամբ տարածվում է ՀՀ քրեական օրենսգրքի գործողությունը՝ քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարելու դեպքում: Նշված հոդվածի բովանդակությունից երևում է, որ դրանով նախատեսված դեպքերը այս կամ այն ծավալով առնչվում են ՀՀ իրավազորությանը (այդ դեպքում առաջանում է հայցող և հայցվող պետությունների իրավազորությունների մրցակցություն), կամ էլ բխում են միջազգային հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած միաջազգային պարտավորություններից:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը, չեն նվազեցնում հեղինակի կողմից ներկայացված մի շարք խնդրիների լուծմանն ուղղված առաջարկների կարևորությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ: Գայանե Մելիքյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, արդիական է, տեսական և գործնական առումով՝ արժևոր: Այն

շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ, իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսի կարծիքին ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.04- Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, վարչական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությանը, իսկ հեղինակն արժանի է «իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ,
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒ **ԱՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ**